Ալեքսանդր Ծատուրյան

Մուսա

Դարձյալ նո՞ր երազ և նո՞ր ցնորքներ…
Ահա հրճվում է իմ մատաղ հոգին.
Շտապի՛ր, ո՛վ Մուսա, քո սրրբանվեր
Համբույրը դրոշմել երգչիս շրթունքին:

Շտապի՛ր… ժրպիտրդ այրող, կախարդիչ
Թո՛ղ վառե սիրտրդ հրրով սրբազան,
Թո՛ղ ոգի շնչե հայացքրդ դյութիչ.
Ես կամիմ երգել հրաշքներ գարնան…

Թո՛ղ որպես անուշ զեփյուռ քաղցրաշունչ,
Քո թովիչ ձայնը հնչե ականջիս
Ե՛վ հուսո տաղեր, և՛ սիրո մրմունջ,
Ես կամիմ երգել տենչանքը սրտիս:

Ես կամիմ երգել անվերջ քաղցրություն
Մի նոր, ոսկեհույս և խաղաղ կյանքի.
Ես կամիմ երգել սիրո սրբություն
Եվ վսեմ փայլը անկեղծ վաստակի:

Ես կամիմ երգել, երգել հարատև,
Որպես թռչունը ազատ եթերում.
Օ՜, շտապի՛ր, Մուսա՛, թռի՛ր սրաթև.

Քանի երազքս չի ցնդել օդում…

1888, 9 փետրվարի